

235

٢٣٥

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան . . . 14 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.



ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօշար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՍԻԿ

Մանուցման սուղը
20 ամսիսիս



ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iraounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравунк“

ВАРНА

Գրութեան տնոս
տնոսիս

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՄԵՆ ՉՈՐԵՔԵՄԲԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ

ԱԶԳ

Ս. Մանուգան տունին առ-
թիւ յառաջիկայ շաբաթ օր
ժողովոյն չափով հրատարակու-
մի :

ՆՈՐ ՏԱՐԻՆ

Շատ բնական սովորութեամբ
մը ամէն դասակարգ և գրեթէ
ամէն անհաա նոր տարիի մը
սեւմին վրայ իր ստոր գնե-
լու պահուն, հարկ կը տեսնէ
անգամ մը յետագարձ ակնարկ
մը ձգել վերջացող տարւոյն յամ-
բօրէն սահած տասներկու ա-
միսներուն վրայ : Ի՞նչ ալ այ-
սօր այդ բնական սովորութեան
համակերպելով, անցողակի ակ-
նարկ մը կը ձգենք անգամա-
ւորէն անցած 1905 ի վրայ :

Նախընթաց տարւոյն Սաս-
նոյ և Տարօնի մէջ գործուած
նախճիւրներէն վերապրող մեր
մերկ ու նօթի ազգայիններուն
հաց ու հագուստ մատակարարե-
լով ըստ կարելւոյն, եղբայրակ-
ցական պարտականութիւն մը
կատարելով մտահոգութեամբ երբ
կը տողորուէր հայութեան զգա-
յուն մասը, յանկարծ, անսպասե-
լի կերպով վրայ հասաւ Պագուի
խաւովան խժժութիւնը՝ ուղ-
ղուած մասնաւորապէս տեղւոյն
հայ տարրին դէմ :

Մինչ Պագուի այդ հայակուլ խժժ
գծութիւնը տեղական հանգա-
մանք ունեցող դէպք մը կ'են-
թադրուէր, չուշացան նախիջե-
ւանի, Երևանի, Շուշիի և ուրիշ
տեղերու վանդալական շարժում-
ները, ապացուցանելով թէ Կով-
կասի հայութեան դէմ ընդար-
ձակ դաւադրութիւն մը պատ-
րաստուած է, երկրին հայատեաց
ուս ու վրացի պաշտօնէութեան
և համախառնական մահմետական
պետերու միջեւ կայացած հա-
մաձայնութեամբ մը :

Սակայն միւս կողմէ վարան-
ցով—Տաշքով կոմսին, Կովկասի

փոխարքայ կարգուելով, դէպի
Հայերը համակրանօք վերաբե-
րիլը և իր միջնորդութեամբ Հա-
յոց եկեղեցական ու դպրոցա-
կան կալուածները վերադար-
ձունելու կայտեր, հրովարտակը,
եկան մեզ նոր ոգևորութիւն և
հաւատք ներշնչել թէ ուս կա-
ռավարութիւնը Բլէզե-կալիցիա-
կան հայահալած տրամադրու-
թիւններէն հրաժարելով, սկսած
է հայասէր քաղաքականութիւն
մը ձեռք առնել :

Եւ կարծենք թէ չէինք սխա-
լած մեր այս հաւատքին մէջ, ե-
թէ այդ օրէն Չարի կառավարու-
թիւնը կարող ըլլար Կովկասի
մէջ իր հեղինակութիւնը անսա-
սան պահպանել : Բայց յեղա-
փոխութեան ամենի հոսանքը
ծայր տուած Ռուսիոյ մեծ կեդ-
րոններէն սղողեց ամբողջ կայս-
րութիւնը եւ չլստեց կառավա-
րութեան շիջելու, որոնք արդէն
թուլացած ճարտական ձախող
պատերազմէն իսպառ անկարող
գտնուեցան երկրին մէջ, ի մաս-
նաւոր Կովկասի մէջ, կարգը
վերահաստատելու :

Ռուս կառավարութեան ցարդ-
երկարաձգուող տկար վիճակէն
բոլորովին քաջալերուած Կովկա-
սի համախառնականները շղթայա-
գիրկ գազաններու նման՝ երբ
սկսան առանց պատճառի և
առանց բացառութեան ամէն
կողմ հայեր շարդելու և կողոպ-
տելու ճարտարաւորուել, Կով-
կասահայութիւնն ալ իր մահը
իր աչքին առջեւը տեսնելով
ցնցուեցաւ, և առնական ընդ-
դիմութեամբ մը շատ մը կէտե-
րու վրայ գիտցաւ արժանաւո-
րապէս պատժել թշնամին և
ցոյց տալ աշխարհի թէ Հայն
այ գիտէ ու կրնայ ինքզինք
պաշտպանել նոյնիսկ իրմէ աւելի
բազմութիւն թշնամիներու դէմ :

Կովկասի արիւնհանգ դէպ-
քերու շարքը սրչափ սր ալ
երկարաձգուի, անոր առթած
նիւթական վնասներուն փոխա-
րէն Հայութիւնը դէթ քաջ կըռ-
ուողի դիւցազնական անունը կը

շահի. անուն մը, համբաւ մը զոր
ցարդ միայն Ձէյթունի դէպքե-
րը արդարացեցին հայ ցեղին
համար : Եւ պէտք է անմիջապէս
աւելցնել թէ մօտ է օրը,—և
այս անպատճառ ներկայ նոր
տարւոյ շրջանին— որ Սահմա-
նադրական նոր Ռուսիոյ Կովկա-
սի նահանգին մէջ խաղաղ ու
բարեկարգ վիճակ մը հաստատ-
ուի, և հան հայ տարրը՝ իր
երկրին էն ընդունակ և կարող
տարրը, բոլորին վրայ իր դե-
րակշիւ հանգամանքը վերստա-
ցած ու գերազանցօրէն բարեբա-
տիկ վիճակ մը ստեղծէ իրեն
հաւատք : Եւ միւս կողմէն ըստ իւր
կոչման զօրավիգ ըլլայ իր Յան-
կահայ եղբոր սուրբ Դատին :

Ասդին տաճկահայոց վիճակը
1905 ի մէջ եթէ միւլթարական
կողմ մը ունէր այն ալ միայն
կրթական հաստատութեանց ան-
ընդհատ շարունակութիւնն էր :
Ասկէ դուրս ոչինչ կար անդոր-
րացուցիչ հարկերու հաւաք-
ման համար չափազանց խստու-
թիւն, ինչ ինչ տուրքերու յա-
ւելում, երթեկութեանց ար-
գելք, գողութիւն և աւազակու-
թիւն անընդհատ, կոտորածի ըս-
պառնալիք : Մանաւանդ Սուլ-
թանին մահափորձը, յանդուգն
ձեռնարկ մը հայ յեղ. Դաշնակ-
ցութեան կողմէ գործուած, ե-
կաւ աւելի ահի ու սարսափի
մատնել ամբողջ թուրքիոյ հա-
յութիւնը, այլևս նոր շարդերու
սկսումը անխուսափելի էր, եթէ
դեսպանները ամենախիստ ազ-
դարարութիւններ բրած չըլլա-
յին : Եւ որպէսզի 1905 ին թուր-
քիոյ հայութիւնը առանց կոտո-
րածի չը մնար՝ Ալվարիճի և
Սասնոյ մէջ ուրիշ գիւղի մը ջար-
դը ու հրդեհումը եկան այդ թե-
րին գոցել :

Այս ամենի առթիւ և ամբողջ
տարւոյ ընթացքին Պոլսոյ Ազգ-
իշխանութիւնը քահանայի և
վարդապետի տեղափոխութիւն-
ներ ընելէ զատ ոչ մէկ հիմա-
կան գործ կրցաւ տեսնել : Ե-
րուսաղէմի հաշուական խնդիրը

ցարդ չաւկախ կը մնայ. Կրօնա-
կան և Դաշնական ժողովները
հակառակ Սահմանադրութեան և
հակառակ ժողովրդեան կամքին
կը շարունակեն իրենց անուա-
նական գայութիւնը՝ ամէն ինչ
Դրան քահանայքին յանձնած ու
միայն իրենք այր և կնոջ ներ-
քին վէճեր քննելով, քահանայի
տիրացուի ու թաղականի խն-
դիրներ անուշի կապելով, և քա-
նի մը օրը անգամ մը եկեղեցի-
ներու մէջ Սուլթանին արեւշա-
տութեան համար հանդիսաւոր
մալթանքներ կատարել տալով
ժամանակ կանցուցնէ : Ինչպէս
ըսինք, Թուրքիոյ Հայոց համար
ոչինչ միւլթարական չափ կըր-
թական գործին տարտամ բայց
անընդհատ շարունակութեանն :

Անդին Պարսկահայութիւնն ալ
սարսափներով լի տարի մը բո-
լորեց Կովկասի դէպքերուն հե-
տեանքով : Բայց բարեբաղդաբար
Շահին և գահաժառանգին հայա-
պաշտպան վարմունքը փրկեց
ցարդ Ատրպատականի հայու-
թիւնը իրական բնաջնջումէ :

Արտասահմանի հայ գաղթա-
կանութիւններէն Պուլկարիտն և
Ռուսիան ոչ մէկ բարեշրջման
նորագոյն նշան ցոյց տուին :
Պուլկարահայր պահեց և շարու-
նակեց իր եկեղեցական ու կըր-
թական հաստատութիւնները
նախկին վիճակին մէջ, յառաջ-
դիմական նշանակելի քայլ մը
առանց առնելու, Իսկ Ռուսիոյ
հայութիւնը, իր նոր գաղթական
նութեան հետ, դէպի կորստեան
վիճը աստիճան մըն ալ վար ի-
ջաւ վերջացող տարւոյն մէջ,
քանի որ ոչ մէկ ազգային նոր
շարժում չեկաւ կեցնել զինք :
Այս երկու դրացի հայ գաղթա-
կանութիւնները մէյմէկ Առաջ-
նորդական վիճակ կազմելու
կամ ազգայնապէս կազմակերպ-
ւելու իրենց պատշաճական բաղ-
ձանքին մէջ անմիջապէս մնացին
ցարդ :

Ամերիկայի երիտասարդ հայ
գաղթականութիւնը իր եռուզե-
ռումին մէջ բաղդատաբար նա-

խանձելի գործունէութիւններ ցոյց տուաւ թէ՛ յեղափոխական-կերպութեան օգնելու և թէ՛ բնագաւառի ազգայնական վարժարաններու նպաստելու տեսակետով . բայց ինչ որ կը սպասուէր նախընթաց տարւոյն մէջ, չիրականացաւ 1905 ի ամբողջ ընթացքին : Ստորագրեալ եպիսկոպոս չկրցաւ այդ խանդավառ և զոհարարութեան տրամադիր գաղթականութիւնը ազգային կազմակերպութեամբ մը ամրապէս իրար կապել , և վիժեցուց նախընթաց երկու տարիներուն մէջ թափուած ջանքերը :

Եգիպտոս ապաստանող հայ գրադէտներու երամակէն տարւոյն սկիզբին մօտաւորապէս երկվեցեակ մը հայ թերթերու երեւումը թէ՛ և աւետուեցաւ , բայց անոնց շատերը ասուպի նման փայլեցան և անհետացան , միայն ասպարէզը ձգելով գլխաւորապէս Լոռաքերի և Աղատ—Բեւի . Եգիպտոսի շուտ գրգռող և շուտ ընդարձացնող կլիման եթէ յուսախաբ ըրաւ մեզ երիտասարդ ապաստանողներու խոտուեմներէն , գէթ միտիւթարութիւն ունեցանք նուպարեան գերդաստանէն երկար տոնէն ի վեր սպասուած մեծ բարիքի մը աւետիսն առնելու—40,000 ոսկիով Առեւտրական վարժարան մը հիմնելու համար Պոզոս փաշայի վեհանձն որոշումը : Պիտի իրականանայ այդ վստահապէս , եթէ բարերարը չը չեղեցնեն իր նպատակէն . եթէ՛նա չեղուի , այդ ալ եգիպտոսի նորընտիր Առաջնորդ Աշաւուսի վարդապետի գործունէութեան մէկ բացասական արդիւնքը պէտք է նկատուի :

Եւ վերջացող տարւոյն հրաժեշտի օրերուն , այդ փարաւորներու երկրէն հասնող «Հայ . Ի . Ընդհ .

Միութիւն» մը կազմուելու լուրը աւետիսներու էն բերկրաւորութիւններուն , և կը յուսանք թէ՛ ազգին էն ուժեղ տարրերուն հոն համախմբումովը կարելի պիտի ըլլայ իսկապէս ընդհանուր միութիւն կայացնել ազգային ու հայրենական սուրբ դատը միացեալ ուժերով զօրեղապէս պաշտպանելու համար :

ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

—Ով որ բնաւ տառապանք չէ կրեր ոչ ոքի չը խղճար :

—Փոխանակ փորձուելու լաւագոյն է ուրիշներու փորձէն խրատուել :

—Ով որ պատիւը կորսնցուց ալ պահելիք բան մը չունենար :

—Ճշմարիտ գաստիարակութիւնը այն է որ ընկերականութեան համար մարդ կը պատրաստէ :

—Էն ճշմարիտ պատմութիւնները շատ անգամ էն տխուրներն են :

—Ճշմարիտը կրնայ երբեմն ճշմարտանման չըլլալ :

—Մարդ խիտ յաճախ իր թշնամիներուն վրայ կը խորհի քան թէ իր բարեկամներուն :

—Ճշմարիտ քաջութիւնը տառապիլ գիտնալն է :

—Տալով մարդ աւելի մեծ հաճոյք կըզայ քան թէ առնելով :

—Հետաքրքրութիւնը և բամբասանքը երկուստեակ քոյրեր են :

—Մարդկութիւնը մարգերէ

նախամեծար է :

—Սիրտը հաղարաւոր առիթներու մէջ մտքին սխալները կուղղէ :

ԲԱՆԱԲԱՆԱՆ ՏԱՐԻՆ

Ժամանակակից պատմութիւնը ստուարթիւ էջեր պիտի յատկացնէ 1905 ին շարունակուող և հարիւր հազարաւոր ընտանիքներ թշուառացնող ողբաճարունական մեծ պատերազմին որ հսկայ Գողթաթին փոքր Դաւթին հետ մեծամարտելու նմանութիւնը ունեցաւ : Ժառանգական իր փոքրութեանը տասը տարի առաջ վիթխարի Չինաստանին յաղթելէն և իր յաղթանակին պտուղէն զրկուելէն յետոյ , տասնամեայ կուռ պատրաստութեամբ մը չափուեցաւ հիւսիսային հսկային հետ ալ անսպասելի յաջողութեամբ ու ջանքախնայ և ուժասպառ ձգեց զայն , նշաւակելով աշխարհի առջեւ անոր յոյսերապին սնափառութիւնը որ քիչ մը առաջ սարսփ կ'ազդէր նոյն իսկ եւրոպական մեծ պետութեանց : Փոքր ծառնի հսկայ Ռուսիոյ վրայ տարած յաղթանակը իրաւունքի , քաղաքակրթութեան և գիտութեան յաղթանակն է , ընդդէմ անիրաւութեան , բռնակալութեան և տգիտութեան : Ահա այս տեսակետով է որ զարեւու ընթացքին մէջ նշանակելի պիտի մնայ 1905 տարին :

Անիրաւ յոխորտանքի զգուշի օրինակ մըն ալ Գերմանիան ցոյց տուաւ Ֆրանսայի դէմ Մարտի խնդրոյն մէջ , օգտուելով ուզելով Ռուսիոյ ջանքախնայ վիճակէն , որ չը պիտի կրնար իր գիւղից Ֆրանսային օգնել : Այս վերջինը ստիպուած մասամբ համակերպեցաւ Գերմանիոյ առաջարկներուն , բայց իր վերջին բառը մարտեան միջազգային գեպանախորհուրդին մէջ արտասանելու մտադրութեամբ : Այս կերպով 1905 ը առանց եւրոպական մեծ պատերազմի մը անցաւ , սա-

կայն այդ կնճիոր յուժուրը դժուարին գործը մնաց 1906 ին , յորում կը հաւատանք թէ տարածութիւն նուաթապաշտ Գերմանիոյ բրտութիւնը և յոխորտանքը պիտի սանձադրուի կա՛մ միջազգային զեպանախորհուրդին մէջ և կա՛մ եւրոպական մեծ պատերազմով մը , որուն մէջ Գերմանիա մինակ պիտի մնայ 2-3 պետութիւններու զիմաց : Այս փառքն ալ 1906 ին վերապահուած ըլլալ կը թուի բրտութեան , լրբութեան և շահամոլութեան մարմնացումն եղող Գերմանական հսկային դիտապատ անկման խրախճանքը մեղ տօնել տալու և մարգասիրութեան և իրական քաղաքակրթութեան նոր մասկանի մը բացումը հոշակելու համար :

Վերջացող տարին Թուրքիոյ համար կրկին շարաքաւտիկ թուական մը եղաւ : Մակեդոնիոյ երեք նահանգները վարչական և տնտեսական տեսակետներով բաժնուած են այլեւս Թուրքիայէն , անոնց վերջնական բաժանումը շատ երկար ժամանակի գործ չէ : Աւարական ապստամբութիւնն ալ լուրջ սպառնալիք մըն է Թուրքիոյ գոյութեան դէմ . Արարեան , Սուրբան , Ասորեստանը ու Միջագետքը Սուլթանի համար վտանգի տակ են , ցորչափ ելմէնի ապստամբները գէնքերն ին վար չեն գներ : Հիմակ հպատակ եգիպտոս մը չկայ որ Սուլթանին համար շագանակը կրակէն դուրս քաշէ : Անատոլիոյ թուրք զօրքերը երբ սա ձմեռ եղանակին անկարող կը գրտնուին ելմէնի ապստամբութիւնը նուաճելու , յառաջիկայ տման մէջ բռնաւ չպիտի տոկան Արարիոյ կիզիլ տաքին և ապստամբութիւնը սանձարձակ պիտի տարածուի նախ Հիճազի նուիրական նահանգին ու յետոյ հետզհետէ բոլոր արաքսոս երկիրներու մէջ ուր թրքական զրօշակը կը ծածանի :

Բեդերսպուրկի մէջ ճիշտ տարի մը առաջ պայթող յեղափոխութեան մը տակաւին կը շարունակուի ողբալ կայսրութեան ամբողջ տարածութեան վրայ : Արիւնը կը հոսի ուղիւսէն յե-

ՍՈՒԼԹԱՆԸ ՍՊԱՆՆԵԼՈՒ ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Արտատպուած «ԱՐԵՒԵԼԻՔ»-էն)

(Ծար . նախորդ թիւէն)

ԸՆԴ . ԴԱՏԱԽԱՉԻՆ ՃԱՌԸ

Ելեքտրականութեան պատրաստութեան եղանակն ալ հարցուելով Ժօրիս , պատասխանեց թէ երկաթ սընտուկը «Վիթթորիա» ձեւով կառքին ճիշտ նստելու տեղը դրուելու համար պատրաստուել է . նաեւ կառապանին նստելիք տեղն ալ մասնաւորաբար շինել տրուած է կառքը գործարանէն գնուելու պահուն , թէ՛ և որոշուել է հոն ալ հրանիւթ գնել , սակայն ներկայիս որ կառքին երկու տեղերը երբ հրանիւթ դրուի , երկու ոյժերու բաղաժը կրնար արդիւնքը նուազեցնել , ետ կեցուել է այդ գաղափարէն . ուստի բաւականացեր են

միայն կառքին նստելու տեղը գնել հրանիւթ : Սնտուկի մէջ «քլորաթ սընթթա» աւելցուցի են . նաեւ գրպանի ելեքտրական լապտերներէ բաղկացած և տասնիւթու «վալթ» ոյժ ունեցող ելեքտրական գործիքէ մը տուալ եկած գրական ու ժխտական ելեքտրական երկու հոսանքները միացնելու համար , հոսանք փոխադրող թելերէն մէկը վերոյիշեալ քրօնսմէթըր ժամացոյցին և միւսն ալ ժամացոյցին սլաքին կապուել են : Միայնգամայն ժամացոյցին սլաքը ճիշտ մէկ վայրկեան քառասուներկու երկվայրկեանի մէջ ժամացոյցին տախտակին շրջանը կատարելով երբ թելին զպչէր , սլաքը , արդէն միտաղէ շինուած և ելեքտրական հաղորդիչ ըլլալով , ելեքտրական հոսանքը «թիլ» ի միջոցաւ անտուկին մէջ գտնուած «քառսլէրին» պիտի հասնէր : Այս կերպով պայթումը առաջ բերելու համար պատրաստութիւնները կատարուել են : Ելեքտրական տրարքին առջի իրիկունը Լիբարիքսի , Տիւրին Ռիսի և Ռուպինա Ֆայինի հետ գտնուել է : Որոշուած է եղեր Թէ Ռուպինա Ֆա-

յին անձամբ կառքին հետ երթայ և նոյն իսկ մանր աչքը տանելով ինք բռնկցնէ քանդիչ նիւթը . սակայն Ժօրիս տեսնելով որ ատենք կը վարանին , Ժօրիս իր եպիսկոպի զգացումները և վայրագ գաղափարները յայտնելով , ըսեր է թէ «եթէ դուք չերթաք ես կերթամ» : Այդ կերպով զանոնք քաջալերել է . Ռիս ալ նկատելով որ Ռուպինա անձամբ քանիցս դրնուելու և փորձի համար առանձին դացած է Սէլամըքի արարողութեան , որով այս անգամ կրնար ուշադրութիւն հրաւիրել ու այդ կերպով ամբողջ անծաւալարտ մտադրութիւնները կրնան ապարդիւն մնալ , և նաեւ Ռիս , Ժօրիսը քաջալերութիւններէն սիրտ առած , մտադրեր է Ռուպինայի հետ անձամբ գտնուել : Նոյն գիւղիցը մեկնելու պահուն Ժօրիս յաւաքանական հրաժեշտը տուել է անոնց . նաեւ Ժօրիս ուրաթ առտու ալ հանդիպելով անոնց հետ տեսակցեր է : Կատարուած քննութեամբ , ձեռք բերուած վկայութիւններով և Ժօրիսի այս վերջին յայտարարութեանց նայելով , քանդիչ նիւթը պարունակող

կառքին մէջ Լիբարիքս և Ռուպինա Ֆային գտնուել են . իսկ կառքը տարեր են Ժօրիս Կոչուած կառապանը ու ձիաւանդ Օրուանդ : Եղած եպիսկոպի պատրաստութեանց նայելով , մէկ վայրկեան քառասուն երկվայրկեանէն առաջ , ատենք յաջողութեամբ հեռանալ ու փախչիլ զէպքին վայրէն : Այս պարագաները նկատողութեան առնուելով , հարկ դատուեցաւ անոնց փոխուստին պատճառները ու եղանակը ճշդել : Ուստի Պոյսոյ Սիրքէ-ճիի ոստիկանութեան կայանի անցաղըրի պաշտօնեայէն բերել տրուեցաւ ուրաթ օրը Կ . Պոլսէն մեկնող ուղեւորներուն տոմարը : Հաստատուեցաւ թէ Լիբա Ռիս , կիւն՝ Սօֆի Ռիս և Սամուէլ Ֆային ու աղջիկը՝ Ռուպինա Ֆային եղեանական զէպքին օրը «քօնվանսիօնէլ» կատարումըով Կ . Պոլսէն փախչելու յաջողութեամբ վերջապէս ձեռք բերուած անցաղըրով մը զօր եղեանական արարքէն մէկ քանի օր առաջ «վիզէ» ընել տուած էին : Միայն թէ , ինչպէս մանրամասնօրէն պարզուած էր , Սամուէլ Ֆային Սօֆիայի մէջ պայթումի հե-

տաղիմական եւ յեղափոխական անհայտ տարրերուն ծայրայեղ ընթացքին հետեւանօք . իսկ կարգը վերահաստատելու եւ խոստացուած սահմանադրութիւնը գործադրելու համար կառավարութիւնը կը ստիպուի առժամայէս խիստ միջոցներ ձեռք առնել : 1905 թ. ռուսահպատակ ազատականներու յաղթանակի արիւնոտ թուականն եղաւ . մաղթելի է որ 1906-ին ալ այդ յաղթանակի վայելքի թուականը բանայ :

Քաղաքական կարեւոր փոփոխութիւն մը կատարուեցաւ Շուէտ Նորվեգիա ամրոյն մէջ : Նորվեգիայի կարծական ծառացումով մը ամուսնալուծութիւն բաժանում յայտարարեց, եւ յաջողեցաւ առանց արիւն թափելու իր անկախ ինքնօրինութիւնը ձեռք բերել : Նորվեգիացոց այս յեղափոխութեան ատեն երկու գլխաւոր կէտեր զարմանք պատճառեցին . մին Շուէտացոց պաշարներէն Նորվեգիայի անօգուտ արեւմտահողմանց տեղի չը տրուեցաւ , երկրորդ՝ Նորվեգիացոց ժողովրդական քուէով՝ ոչ թէ հանրապետութիւն, այլ թագաւորութիւն վերահաստատելն :

Ինչ տարօրինակ հակապատկեր, ազգ մը առանց կաթիլ մը արիւն թափելու կազատի ուրիշ ազգի մը եւ վեհապետի մը տիրապետութենէն ու ազգային անկախ թագաւորութիւն մը կը հիմնէ , ինչպէս Նորվեգիան . ուրիշ ազգ մը իր ազդակեց վեհապետէն սահմանադրական մէկ քանի իրաւունքներ ստանալու համար բերաւոր գոհեր տալ կըստիպուի , ինչպէս Ռուսիան :

Համախառնային քաղաքականութեան տեսակէտով կարեւոր փոփոխութիւն մըն է Անգլիոյ կառավարական ղեկին ազատական կուսակցութեան ձեռքը անցնելը : Երկու տարիներէ ի վեր պահպանողական կուսակցութիւնը շատ զօրաւոր ու ճարտար կերպով պետական գործերը վարելէ յետոյ յանկարծ ու անըսպասելի կերպով զայն կը թողու ազատականներուն :

տեւանքով մեծած ըլլալով , հարկ էր ուրիշ անձ մը փնտռել : Սամուէլ անունով նոյն պահուն Ռուսիայի ընկերացող եւ կպերելի ոճին մասնակցող : Ուստի նկատելով որ այդ նպատակով գեռ կարգ մը նիւթական ճշմարտութիւններ ձեռք պիտի բերուին , նորէն ձեռնարկուեցաւ մանրազնային խուզարկութեանը ան տունին , ուր ատոնք բնակած էին մինչեւ եղեռնական արարքին օրը . նաեւ չորս կողմի դրացիներու վկայութեանցը դիմուեցաւ : Տունին ստորնայարկի ջրհորին ջուրը պարպուելով , խուզարկութիւն կատարուեցաւ . ջրհորին մէջէն հանուեցաւ աղիւսի իւր կապուած գունաւոր շապիկ մը . թաշկիւնակ , վարտիկ ու տուփ մը այցեատմա , նկատելով որ ատոնց այդքան ուշադրութեամբ աղիւսի մը կապուելով ջրհորը նետուելը նպատակ ունի իսկութեան սահմանումի գործողութիւնները զըժուարացնել եւ անպատճառ մարդու մը ո'վ ըլլալը զազտնի պահել , այդ մասին այլեւս կասկած չէր մնացած , Այցեատմաներուն վրայ ուսեքէն

կազմուած նոր նախարարութիւնը խոստացաւ իր նախորդին արտաքին քաղաքականութիւնը շարունակել , անշուշտ աւելի ազատամիտ հայեացքներով առաջնորդուած . ինչ որ ազատութեան ծարաւովը պայպ կած մեզ նման գերի ժողովուրդներուն շատ մը փայլուն յոյսեր կը ներշնչէ . երբ նկատենք մանաւանդ թէ համախառնային քաղաքականութիւնը ղեկավարելու առաջնութիւնը այլեւս Անգլիոյ վիճակած է , Ռուսիան ջախջախուած եւ Գերմանիան ալ գրեթէ առանձին մընացած ըլլալով :

ԱՄՅՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԻՈՅ ՄԷՋ

Բեդերսպուրկ 11 յնվր.

Մենքեն ատըր զառն տպաւորութեան տակ անցաւ Ռուսիոյ հասարակութեան համար : Քաղաքական խուզարկութիւնները եւ խմբովին ձերբակալութիւնները կը շարունակուին , կը ծանուցուի թէ եթէ յունվար 9 խաղաղ անցնի բոլոր խտուրթիւնները եւ պատերազմական վիճակը պիտի վերջութի :

Ներքին գաւառներէն եկած հեռագիրներն ալ շատ վրդովիչ չեն :

Մօսկուայի մէջ յանձնախումբ մը քննութեան պիտի սկսի խռովութեանց պատասխանատուները եւ պատճառները ճշգրտու համար :

Վարչաւայի մէջ մասնակի փոքր զէպքեր կը պատահին : Կառավարչը արգիլած է բնակիչներուն գաւազանով կամ հովանոցով տունէն դուրս ելլել եւ նոյն իսկ ձեռքերն զըրպանուին մէջ դնել :

Սէվաստապոլի մէջ գետային Ընկերութեան նաւազները մերժեցին աշխատիլ երբ իրենց նաւը զօրք եւ թնդաւոր տոնելով մեկնիլ կուզէր . թէպէտ իսկ հոն խռովութիւնը զսպելու համար :

Նոյն զէպքը պատահեցաւ Օսեսայի մէջ ուր բազմաթիւ նաւազներ ձերբակալուեցան :

Նովոօբսիսքի մէջ հանդարտութիւնը հաստատուած է :

Քիէվի բոլոր չրջակայքը մեծ

եւ հայերէն երկու տողի վրայ «Ժօրթ Բեդրի վարչաւով» գրուած էր : Հետեւաբար բոլորովին հաստատուեցաւ որ թէ՛ այդ այցեատմանը եւ թէ՛ անոնց կցուած հանդերձեղէնները կառավարութեան ժօրթի կը վերաբերին :

Ժօրթի յայտարարած էր որ եղեռնական արարքին առջի գիշերը Լիբաւրիս . Սիւլիս Ռիչի Գարլ Եւովանովիչ ու Թրասա Եւովանովիչ ախոռին եւ կառատան մէջ վիրոյշեալ պատրաստութիւնները տեսնելէ յետոյ եւ , Ռիբսը տուն դառնալէն քիչ վերջը , կառապան ժօրթ գալով, Ռիբսի հետ խորհրդակցութիւններ կատարած է քանդիչ նիւթը բռնկեցնելու մասին : Զրհուրէն հանուած չապիկը ժօրթի ցոյց տրուելով ըսաւ թէ կառապան ժօրթի հանդերձեղէններուն կը վերաբերի : Այս կերպով հաստատուեցաւ թէ ժօրթ եղեռնական արարքէն ետք զէպքին վայրէն հեռու շալով , Ռիբսերուն միացած , նոյն տանը մէջ հաջուստը ու ձեռք փոխած եւ իր արտաքին երեւոյթը ու ոտքը Սամուէլ Ֆայինի ձեռք վերածելով , ինքզինքը Օր. Ռուսիայի հայ

անկարգութիւններ կը պատահին . զօրքը միջամտել պիտուած է :

Տփղիսի մէջ սովորական կեանքը վերսկսած է . լայց ցորենի նուազութիւնը դեռ շատ մտահոգ կրնէ իշխանութիւնները : Եւրոպայի մէջ 80 անձեր ձերբակալուած են , ասոնց մեծագոյն մասը ուսեալներն են :

Դեկտ 24 ին հրատարակուած սուրբաղով կայսրը կը հրամայէ ընտրութեանց պատրաստութիւնները փութացնել եւ կարելի եղածին չափ շուտ գումարել Տոււման : Այս նոր սուրբաղի տրամադրութեամբ ընտրողներու թիւը տասնէն տասն եւ հինգ անգամ կաւելնայ օգոստ. 19 ի օրէնքին բաղդատմամբ . այս պատճառաւ ալ ընտրութիւնները երկու ամիսէն հազիւ կը լինին :

Կառավարութիւնը իր կողմէ բոլոր կարելին իզոյժ կը դնէ Տոււմանի գումարուծը փութացնելու համար . բայց հարկ եղած կանխապատրաստութիւնները ամբողջացնելը ժամանակի կը կարօտի, գէթ 50 օրի . եւ երեսփոխանները ապրիլի վերջէն կանուխ չափեր կրնան Բէդերսպուրկ հասնիլ, պայմանաւ որ գործադուր կամ ուրիշ ան կարգութիւններ պատահելով խաղաղ կեանքը չը խանգարեն :

Ընտրական ժողովները պիտի արտօնուին յունվար 8 ին :

«ԺՈՒՌՆԱԼ»

Ն Ո Ի Ի Ր Ա Տ Ո Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Տեղւոյս Աղք. Ընկ. Գործ. Ժողովը շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուէրները գեկտ. ամսոյ մէջ : Դատի մը առթիւ Տ. Տիգրան Թիւֆէնկեան իր առած հատուցումը 20 ֆր. ամբողջութեամբ ընկերութեանս նուիրած է :

Տ. Կարապետ Եղաւաճեան Ս. Մինդեան այցելութենէ զերծ մնալու համար 5 ֆր.

Անուան տոնախմբութեանց առթիւ Տ. Տ. Յակոբ Թօպալըզեան 10 ֆր. Անդրանիկ Զօրաբեան 5 ֆր. Նիկողոս Քէօթանեան 5 ֆր. Ն. Զիւն 3 ֆր. Խաչիկ Ազնաւորեան 2 ֆր. Յակոբ Պօղոսեան 2 ֆր. Պօղոս Գալէմեան 2 ֆր. Օնիկ Արապեան 2 ֆր. Պօղոս Մանուկեան 1 ֆր. Բարսեղ Կաւանչեան 1 ֆր. Յակոբ Ազապար

ըր ցոյց տուած եւ այդ կերպով ու Սամուէլ Ֆային անունով փախած է : Ժօրթին հարցուեցաւ թէ հարկէր քառասուն քիւ «մէլէնիթ»ը եղեռնական արարքին ատեն ամբողջովին գործածուած է թէ ոչ : Պատասխանց որ թէ եւ անտուկին տարողութիւնը յայտնի չըլլալով , «մէլէնիթ»ները իր քովէն առնուած եւ նոյն անձերուն միջոցաւ ախոռը փոխադրուած են , սակայն ուժգին եւ քանդիչ ազգեցութիւն մը ունենալու համար , անտուկին մէջ «մէլթա» կոչուած կարգ մը երկաթի ու պողպատի կտորներ աւելցնել հարկ էր . նոյն գիշերը անտուկին մէջ քսան քիւ «մէլթա» եւ հազար ու թսուր քիւ «մէլէնիթ» կրցած էր գրուիլ . նաեւ այդ կերպով առաջ եկած ծանրութեան աստիճանը եւ այդ վիճակին մէջ կառքին տրագոթիւնը քրնիւնու համար . նոյն համեմատութեամբ քարի կտորները գրուելու եւ կառքին մէջ չորս հոգի նստիլ եւ ախոռին գտնուած տեղին ամայի ըլլալէն օգտուելով , գիշերանց փորձեր կատարել են : Ժօրթի յայտարարած էր թէ

1 ֆր. Յակոբ Թօփուզեան 50 սանդիւն : Նուիրատուութիւն կաղանդի առթիւ :

Տ. Տ. Խաչիկ Տամատեան 60 ֆր. 60 սն. Կարապետ Պէզազեան 5 ֆր. Ասատուր Փափազեան 5 ֆր. Բարսեղ Սիւզմեան 5 ֆր. Անդրանիկ Շիւմանեան 5 ֆր. Հրանտ Գարագոյեան 5 ֆր. Ռաֆայէլ Գարագոյեան 5 ֆր. Յովհաննէս Դօշուեան 3 ֆր. Արշակ Տավուտեան 3 ֆր. Կարապետ Ստեփանեան 3 ֆր. Տէր Մարտիրոս քա՞հանայ 2 ֆր. Սարգիս Ուղուկոյ. զոսեան 2 ֆր. Գալուստ Սահաթեան 2 ֆր. Յովաննէս Յակոբեան 2 ֆր. Սիմօն Սամուէլեան 2 ֆր. Յարութիւն Սարոխանեան 2 ֆր. Գառնիկ Պէնլեան 2 ֆր. Օրիորդ մը 2 ֆր. Ն. Բէսթանեան 2 ֆր. Մուրատ Մանուկեան 2 ֆր. Նշան Գալֆա 1 ֆր. Միհրան 1 ֆր. Խաչիկ 1 ֆր. Համբարձում Ալթունեան 1 ֆր. Յովհաննէս Եմեճեան 1 ֆր. Թադէոս մա. Մարկոսեան 1 ֆր. Կարապետ Կուրտեան 1 ֆր. Միքայէլ 1 ֆր. Ազեղեան եղբարք 5 ֆր. եւ Տիրան 1 ֆր.

Ի Դիմաց Աղք. Ընկ. Գործ. Ժող. Ատենադպիր Ատենապետ Ա. Զարպիսեան Ս. Սամուէլեան (Կնիք)

Ե Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Հոգաբարձութիւնս կը փութայ հրապարակաւ իւր խորին շնորհակալութիւնը յայտնել Ազնուուհի Տիկին Մանիկ Տամատեանի , որ հաճեցաւ ինքնաբերաբար նուիրել 10 քաշ փայտ ազգ. վարժարանին :

Ա Ձ Դ

Մենքենքէ ոմանց իրենց զաւակաց ամսաթղակները կանոնաւորապէս չի վճարելու պատճառաւ հոգաբարձութիւնը իր նեղ պիւտեճով չի կարողանար ժամանակին վճարել դասատուներու ամսականները եւ զպրոցի այլ պէտքերը : Ներկայիս կը խնդրենք յիշեալ ծնողքներէ որ հաճին իւրաքանչիւր ամս սովճար նոյն ամսուան մէջ անպատճառ վճարել :

Հոգաբարձութիւն Աղք. Երկ. Վարժ. (Կնիք)

սպասած «մէլէնիթ»ները ութսուն քիւլօն աւելի չէին , որուն կատարելապէս վստահ է . Սիւլիսի վարչութեան մէջ ժօրթի գրասեղանը խուզարկուելով երկու հասցէներ գտնուեցան՝ «Անթուան Գոշ. Ֆիլիպ» եւ «Ատալ Պէրշիէ. Զօրիցեան» : Միանգամայն կասկած առթող եւ թարգմանութեան կարօտ ուրիշ կարգ մը թուղթեր եւ լրագրի կտորներ գտնուեցան . ատոնք թարգմանուեցան ու քննուեցան . նաեւ հարցուեցաւ ժօրթի թէ այդ հասցէները ինչ պատճառով գրած ու իր քովը պահած է : Ժօրթի պատասխանաց թէ Անթուան Գոշ Ֆիլիպէ կը բնակի եւ հոն գտնուող հայ խռովարարներու խումբին գործառնութեանց վարչութիւնը ստանձնած խռովարարական պետ մըն է . այս տեղը գտնուողները անոր հետ կը թղթակցին . նոյն իսկ Վոսաճապուհ Պուլկարիս գացած ատեն պատուիրեր է ժօրթի որ իրեն երբ լուր տալ պէտք ըլլայ , նոյն հասցէին նամակ գրէ՝ ուստի այդ պատճառով պ հեր է «Անթուան Գոշ» հասցէին : (Շարունակելի)

ፆ ፐ ከ ሶ ቶ ፐ ሚ

—Պիլը թիւրք վաւորը մուհիմ-

POBULA

Պաշը գաղալարտա քէօյլիւ-
լէր չիֆթլիկլէնէ թէճալիւզ իթ-
մէքտէ օլտըզլարընտան, աւքէր-
լէ միւսատէմէլէր վուգու պուլ-
մուշ իսէտէ պու կիպի խոտու-
սի վուգուաթլարըն հէնմիյէթի
եօգ տրր :

ՄԻԻԹԷՆԷՎՎԻԷ

Մէշուրէ ագթըրիս Մստ. Սարա
Պէրնարա իքրամէն Ամերիկատա
պիր պանգէր թարաֆընտան քէ-
չիտէ օլընան պիր զիյաֆէթէ 25
պին ֆր. մէսարիֆ օլմուշ . մա-
տտմ Սարա Պէրնարտան մատտա
11էրքէքմիսաֆիր մէվճուտ րմըշ,
Շու հալտէ պիր ատտամ 2000 ֆր.
տան զիյատէ սարֆ. օլընմըշ:

ՎԱՌՆԱ, Թուշկր. 4
ԶԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՍ		
Վազոն	54-60 լիպ.	10. / 11. 50
Արապա	52-62 լիպ.	9.60 / 11.80
ԱՐԲԱ,		
Վազոն 100 քիւ		11.70 / 11. 80
Արապա	42-47 լիպ.	6.60 / 7.40
ՆՈՒԼԱՅ արապա	33/36 լպ	5.20/5.30
Վազոն 100 քիւ		12.20/12 30
ՅԱՍՈՒԼԵԱ արապա	100քիւ	24—28
ՌԱՔԻՑԱ	100	հօգ
Արապա	100 քիւ	հօգ
ՏԱՐԸ արապա		10/ 11
ՔՕԼՕԶ արապա	55-60 լպ.	11.12
ՄԻՍԻՐ	57-58 լպ. առապա	8. /8.30
»	100 քիւ	11. 20- 11. 30
ԶԱՎՏԱՐ արապա		9. /9. 60
»	100 քիւ	13. /13.50
ԿԻՆՈՒՅ 15—20 վազոն	վէ	10—15
արապա կէլմէքտէ . վազոն մուամմէսի նաթօլէնն 20 ֆր. արապա մուամմէսի նաթօլէնն 20. 20		
ՍԱՐԴԱՅԻԹԻ		

Նաբուլէոն 20, 20 ֆրանք
Օսմ. լիբանը 22, 75 ալիսոն ֆրանք

ጥሁፍሁሊታፊኒ

Վարնա	Բեաքաքանտա	պազգալիէ	
ժալէլերն	պու	կէնքի	Ֆիյաթը, աթուհն
Ֆրանք	իւլ :		
ԳԱՀՎԷ		2.20/	2.37
Շէֆէր	նէմցէ		66
Շէֆէր	քէսմէ)	սանաթը	37.
Բիրիւնձ	ձէնսփա	չուփալը	42
»	Ֆիրիպէ	»	38
»	Ինկիւիզ	»	29.
Րիգօ	»		49
ԿԱԶ Սանաթըր			12.40
Զէթթիւն	հաղը	քիւլօ	1.—1.10
ԳՈՒՐՈՒ	Իւզիւմ		25

ԹՄՏԲՈՆ

Յառաջիկայի ու բարձր գիշեր Սա-
տինէնիէ սրահին մէջ տեղի պիտի
ունենայ ՊԱԳԻԹԻ ԱՂԵՏԵՆՆԸ, արա-
մը, 5 արարուած եւ մէկ վերջաբան :
Տոմառնիկները կը ծախուին Հապա-
կան Ընդհանրաբար :

2015

Գ Ե Ղ Ո Ի Ն Ի Ն

LEBUEBUE

Նախորդներէն աւելի ճիշտ պարունակութեամբ յոյս տեսած է Նոր «Գեղունիւն» կը պարունակէ 100 էն աւելի գեղատիպ դասական պատկերներ. գերտգանցօրէն յաջող է տպագրութիւնը, հիւանաի են բազմագունի պատկերները: Պատկերազարդ թերթէ մը թէեւ չի պահանջուիր գրական գնահատելի պարունակութիւն մը. սակայն խմբագրութիւնը «Գեղունիի» այս բաժնին հարկ եղած ջանքը ինչպէս չէ. ներքին եւ արտաքին յօդուածագրներ ունին հետաքրքրական գրուածներ:

Գինն է 10 Ֆլ. 4 րոպլի. 2 տոլար:

ԴԻՄԼ
Հայկական սպարան
Ս. Ղազար Վենեցիկ (ԻՏԱԼԻԱ)

Одговорникъ А. Курбетиянъ
печпизатъ а Д. Тодоровъ и С-не—Варна

ՊՈԼԻՏԻԿԱԿԱՆ ԴԱՏԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ

Իշխան Պօրխի Մեռնդը	Յունուար 18
Իշխան Ֆէրտինանտի Մեռնդը	Փետրուար 14
Պաշտօնային Ազատութիւնը	» 19
Իշխան Պօրխի Անուան Տօնը	Մայիս 2
Ս. Բիրիւլ-Մէթոտ	» 11
Իշխան Ֆէրտինանտի Անուան Տօնը	» 18
»	» Գահակալութիւնը Օգոստ. 2

ԿԱԶԱՆԴՉԷՔ "ԻՐԱՒՈՒՆՔ, Ի

ՕՐԱ



ՅՈՅՑ

ՊՈԼԻՏԻԿԱԿԱՆ ԴԱՏԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ

Յունուար 1, 6, 7 և 18	Փետրուար 2, 14
և 19	Մարտ 25
Ապրիլ 23	Մայիս 2, 11
և 18	Յունիս 29
Օգոստոս 2, 6 և 15	
Սեպտեմբեր 6, 8 և 14	Հոկտեմբեր 26
Նոյեմբեր 8 և 21	Դեկտեմբեր 6, 25, 26
և 27	

ՅՈՒՆԻՈՒՄ	ՓԵՏՐՈՒՄ	ՄԱՐՏ	ԱՊՐԻԼ	ՄԱՅԻՍ	ՅՈՒՆԻՍ
1 *Կ ԿԱԶԱՆԻ Գաղութ 68	1 Դ Պահք :	1 Դ ժ. օր Մեծ պահք :	1 Ե ձրադարձիկ Ջառիկ :	1 Բ Լ. օր Յինանց :	1 Ե Ս. Յովհաննու Կարապետի
2 Բ Դ. Օր պահք. Մեռնդը :	2 Ե Ս. Ոսկեանց Բանանայից :	2 Ե ժ. օր » »	2 *Կ ԶԻՏԻԿ :	2 Դ Լ. » » Պարզ և անձրեւ :	2 Ո Պահք : Պաշտօն օր
3 Դ Ե. Օր պահք. »	3 Ո Պահք : Ջիւնաբեր հողմում :	3 Ո ժ. օր » »	3 *Բ Յիշատակ Մեռնդը :	3 Դ Լ. » » »	3 Ե Ս. Գրիգոր Լւ. Եւր ի վերապէ :
4 Դ Զ. Օր պահք. »	4 Ե Ս. Սահակայ Հայրապետի :	4 Ե Ս. Յովհաննու Հայրապետի :	4 *Կ Դ. օր Ջառիկ :	4 Ե Լ. » » »	4 Կ Տօն Ս. Էջմիածնի : Հարսանիք :
5 Ե ձրադարձիկ : Հուլիս և անձրեւ :	5 *Կ Դ. գինի Մեռնդը :	5 *Կ Տնտեսի : Հողմ մերիկ :	5 Դ Դ. » » »	5 Ո Լ. » » »	5 Բ Ս. Մանկանց Բէթղէմի :
6 *Ո ՏՕՆ ՄԵՐՆԴԵՆԻ	6 Բ Ս. Ս. Մարկոսի Եպիսկոպոսի :	6 Բ Դ. օր Մեծ պահք :	6 Ե Ե. » » »	6 Ե Լ. » » »	6 Կ Ս. Նուրիայ և Մանեայ :
7 Ե Յիշատակ մեռնդը :	7 Դ Ս. Ղեւոնդեան քահանայից :	7 Դ Դ. օր » »	7 *Ո Աւետի մ. Ս. Աստուածածնի :	7 *Կ Զ. Կիւրակէ :	7 Դ Պահք :
8 *Կ Դ. Օր Մեռնդը :	8 Դ Պահք :	8 Դ Միջին ք. Գաղութում :	8 Ե Յիշ. Գրիգորի մ. Յովհ. Մկրտիչի :	8 Բ Լ. օր Յինանց :	8 Ե Ս. Սահակայ և Յովսէփայ :
9 Բ Դ. Օր »	9 *Ե Ս. ՎԱՐԴԱՆԻՍ :	9 Ե Ի. օր Մեծ պահք :	9 *Կ Նոր Կիրակէ :	9 Դ Լ. » » » Պաշտօն օր	9 Ո Պահք : Միջին և անձրեւ :
10 Դ Ե. Օր »	10 Ո Պահք : Խառն հողմ :	10 Ո Դ. օր » »	10 Բ Դ. օր Յինանց : Հողմ և պարզ	10 Դ Լ. » » »	10 Ե Ս. Ներսիս Հայրապետի :
11 Դ Զ. Օր »	11 Ե Կ. Պոստ Ս. Ժողովոյ :	11 Ե Սրբոյն Քառասնից մանկանց :	11 Դ ժ. » » »	11 *Ե ՀԱՄԱՐԱԶՈՒՄԸ :	11 *Կ Բարեկենդան Լուս. ի պահք :
12 Ե Լ. Օր » Ջիւն և անձրեւ :	12 *Կ Բուր Բուր և Եկեղան :	12 *Կ Գաղութի :	12 Դ ժ. » » »	12 Ո Խ. օր Յինանց :	12 Բ Ս. Եփրատի Կրկնացոյն :
13 *Ո Տօն Անուանակոյութեան	13 Բ Ս. Օր Մեծ Պահք :	13 Բ Դ. օր Մեծ պահք :	13 Ե ժ. » » »	13 Ե Լ. » » »	13 Դ Ս. Կոստանդիանոսի :
14 Ե Ս. Յովհ. Կարապետի :	14 *Կ ՏԵՆԻՆԴԱՆԻՍ :	14 Դ Լ. օր » »	14 Ո ժ. » » »	14 *Կ Լ. Կիւրակէ :	14 Դ Պահք :
15 *Կ Ա. գինի Մեռնդը :	15 Դ Դ. Օր Մեծ Պահք :	15 Դ Լ. օր » »	15 Ե ժ. » » »	15 Բ Լ. օր Յինանց :	15 Ե Ս. Թէոփանի :
16 Բ Ս. Պետրոսի Հայրապետի :	16 Ե Դ. Օր » »	16 Ե Լ. օր » »	16 *Կ Տօն Աշխարհամարտի :	16 Դ Լ. » » »	16 Ո Պահք : Ջոյ հողմում :
17 Դ Սրբոյն Անտոնի և Եւսէ :	17 Ո Ե. Օր » »	17 Ո Լ. օր » »	17 Բ ժ. օր Յինանց :	17 Դ Լ. » » »	17 Ե Դ. Կիւրակէ :
18 Դ Պահք :	18 Ե Զ. Օր » » Ջիւն	18 Ե Ս. Գրիգոր Լւ. մուսն ի վերապէ :	18 Դ ժ. » » »	18 Ե ժ. » » »	18 *Կ Դ. Զինի Հոգեգա. Հարսանիք :
19 Բ Ս. Թէոփանի թագ. : Հողմում :	19 *Կ Բ. Գաղութի թագ :	19 *Կ Գաղութի :	19 Դ ժ. » » »	19 Դ ժ. » » »	19 Բ Ս. Կիւրակէ Անտոնի :
20 Ո Պահք :	20 Բ Դ. Օր Մեծ Պահք :	20 Բ Լ. օր Մեծ պահք : Հողմում :	20 Ե ժ. » » »	20 Ե ժ. » » »	20 Դ Ս. Դանիէլի Մարգարէի :
21 Ե Սրբոյն Աթանասի և Կիրիլի :	21 Դ ժ. Օր » »	21 Դ Լ. օր » »	21 Ո Դ. » » »	21 *Կ ՀՈԳԵԳԱՆՈՒՄՏ :	21 Դ Պահք :
22 *Կ ՏՏ. Գաղութի Պայր Հարսանիք :	22 Դ ժ. Օր » »	22 Դ Լ. օր » »	22 Ե Ի. » » »	22 Բ Բ. օր Հոգեգաղութի պահք :	22 *Ե Ս. Թագ. ՍԱՀԱՍԵ և ՄԵՐԱՐԱՍ
23 Բ Ս. Օր պահք. Առաջաւորաց :	23 Ե ժ. Օր » »	23 Ե Լ. օր » »	23 *Կ Կարմիր Կիրակէ : Խրքիկ :	23 Դ Դ. » » »	23 Ո Պահք : Պազ և զուարթ
24 Բ Դ. Օր պահք. »	24 Ո ժ. Օր » »	24 Ո Լ. օր » »	24 Բ Լ. օր Յինանց :	24 Դ Դ. » » »	24 Ե Ս. Տրդատայ թագաւորի :
25 Դ Դ. Օր պահք. »	25 Ե Ս. Կիրիլի Հայրապետի : Տուր	25 Ե Յիշատակ Յարութ. Վաղարշ :	25 Դ Լ. օր » »	25 Ե Ե. » » »	25 *Կ Դիւտ տոյր Ս. Աստուածածնի
26 Ե Դ. Օր պահք. »	26 *Կ Դ. Գաղութի թագ :	26 *Կ Դ. Գաղութի թագ :	26 Դ Ի. » » »	26 Ո Զ. » » »	26 Բ Ս. Կարապետի :
27 Ո Ե. Օր պահք. »	27 Բ ժ. Օր Մեծ Պահք :	27 Բ Պահք : Ա. ազ Երկու շաբթի :	27 Ե Լ. » » »	27 Ե Ե. » » »	27 Դ Ս. Ջաղարի մարգարէի :
28 Ե Ս. Մարգարէի զորավարի :	28 Դ ժ. Օր » »	28 Դ » » »	28 Ո Լ. » » »	28 *Կ Յիշ. Եղիա Մարգարէի : Հարս :	28 Դ Պահք :
29 *Կ Դ. գինի Մեռնդը : Հարսանիք :	29 Դ ժ. Օր » »	29 Դ » » »	29 Ե Ի. » » »	29 Բ Ս. Հովսէփոսի կուսանաց :	29 Ե Ս. Եղիա մարգարէի :
30 Բ Առաջին զորավարաց :	30 Դ ժ. Օր » »	30 Դ » » »	30 *Կ Տօն Երեմիայի սրբոյ Խաչի :	30 Դ Ս. Կարապետի կուսանաց :	30 Ո Պահք : Պազ և օր
31 Դ Ս. Երեմիայի վկայից :	31 Դ ժ. Օր » »	31 Ո Յիշ. Թագման Յիսուս Գրիգորի :		31 Դ Պահք :	

U.S. DEPARTMENT OF AGRICULTURE

OFFICE OF THE SECRETARY

NAME		ADDRESS		CITY		STATE	